ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ
ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2013 – 2016թթ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶ

ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Պ. Միրզոյան

Քննարկվել է համայնքի խորհրդանու թիվ 1 նիստում

20-ը փետրվարի 2013թ.

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Վայոց Ձոր մարզի Ագարակաձոր գյուղը գտնվում է մարզի հարավ-արևմտյան հատվածում, Արփա գետի ձախ ափին՝ Եղեգնաձոր- Գնիշիկ տանող ճանապարհի 2 կողմերում, զբաղեցնում է 576.7 կմ^2 տարածք, սահմանակից է Եղեգնաձոր, Մալիշկա, Գնիշիկ համայնքներին:
Գյուղն ունի 258 առկա տնտեսություն՝ 1408 բնակչությամբ, սեռային կազմում արական՝ 773, իգական՝ 745:
Գյուղում գործում է մեկ միջն. դպրոց, մանկապարտեզ, բուժ. կետ, մշակույթի տուն, գրադարան, կապի հանգույց:
Համայնքում առկա է 1863 մետր միջին ճնշման, 6622մ ցածր ճնշման գազատար:
2500մ բարձր լարման, 9200մ ցածր լարման էլ. գծեր,7300մ ինքնահոս ջրատար:
Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը՝ հիմնականում անասնաբուծությունը:Անասնագլխաքանակը կազմում է. խոշոր եղջուրավորը՝ 407 գլուխ, մանր եղջուրավոր՝ 17 գլուխ, խոզեր՝ 24 գլուխ, թռչուն՝ 1600 թև: Գյուղի ռելիեֆն ունի հնագույն հրաբխային կառուցվածք և կտրտված է փոքրիկ գետակով՝ Գռավ կոչվող, և ձորակներով:
Կլիման մերձարևադարձային է :
Տեղումների քանակը տատանվում է 350-450մմ:Առավելագույնս դիտվում է գարնանը՝ ապրիլ- մայիս ամիսներին:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 1535 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 49.5 % - ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1.երեխաներ (0-6տ)	86
2.դպրոցական (7-17տ)	158
3.18-62 տարեկան	967
4.թոշակառուներ	113
5.հաշմանդամներ	104
6.աշխատունակներ	947

Գյուղն ունի 370 ծուխ, որոնցից 39-ը ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

• տեղակալ	1 դրույք
• աշխատակազմի քարտուղար	1դրույք
• Հաշվապահ,գլխ. մասնագետ	1 դրույք
• Առաջատար մասնագետ	1 դրույք
• Օպերատոր	1 դրույք
• Խմելու ջրի ջրբաշխ	1 դրույք
• Հավաքարար	1 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

Մշակույթի տուն

• Տնօրեն	1 դրույք
• Հավաքարար	1 դրույք

Գրադարան

• Գրադարանավար	1 դրույք

Մանկապարտեզ

Մանկապարտեզի վարիչ	1 դրույք
. Հաշվապահ	1 դրույք
. Հաշվապահ	1 դրույք
. Դաստիարակ	0.5 դրույք
. Դաստիարակ	0.5 դրույք
. Դայակ	1 դրույք
. երաժիշտ	1 դրույք
. խոհարար	1 դրույք
. օժանդակ բանվոր	1 դրույք
. Դռնապահ	1 դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 19 հոգուց:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 251 առանձնատուն, 48 հազ.քմ. տարածքով:
Կան վթարային շենքեր:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

.Համայնքի վարչական տարածք	5760.5 հա
որից՝	
1.Գյուղատնտեսական նշ. հողեր	5583 հա
որից՝	
.Վարելահողեր	787 հա
.Պտղատու այգի	23 հա
.Արոտավայր	987 հա
.Անօգտագործելի հողեր	3786 հա
2.Բնակավայրեր	82.4 հա
3.Արդյունաբերական հողեր	18 հա
4.Տրանսպ.կոմունալ ենթակառ.	0.9 հա
5.Պատմամշակութային նշ.	59.1 հա
6.Գետեր, լճեր	17.1 հա

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակում:

Համայնքն ունի մեկ մշակույթի տուն,որն ունի վերանորոգման կարիք,մեկ գրադարան,մեկ մանկապարտեզ՝ վերանորոգված է մեկ խմբի համար, ունի մեկ վերանորոգված բուժ-կետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

.Ծնելիության նվազում՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
.Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը
. Արոտների, խոտհարքների ոչ արդյունավետ օգտագործումը
. Ոռոգման ջրի ներքին ցանցի անմխիթար վիճակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

. Մարզկենտրոնից հեռու է 2.5 կմ
. Ապահովված է խմելու ջրով
. Համայնքի 9760 հա հողատարածքը գտնվում է ծովի մակերևույթից 1100 – 2800մ բարձրության վրա, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում ինչպես այգեգործությամբ, այնպես էլ անասնապահությամբ զբաղվելու համար
. Գյուղում զարգացած են ինֆրաստրուկտուրային կառույցները
. Գյուղում գործում են քարամշակման 3 արտադրամասեր, որոնց միջոցով լուծվում է սոցիալական զբաղվածության հարցը
. Մարզկենտրոնի մոտիկ լինելը ապահովում է բնակչության ազատ տեղաշարժը տարբեր հիմնարկ ձեռնարկություններում աշխատելու համար

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ՋՐԱՄԲԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Վերջին տարիներին վերանորոգումներ չկատարելու պատճառով խմելու ջրի ջրամբարը այժմ վթարային է, ճեղքեր կան հատակի և պատերի վրա,անհրաժեշտ է շտապ վերանորոգում:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակները. ապահովել համայնքին 24 ժամյա մաքուր խմելու ջրով և կանխել կեղտաջրերի ներթափանցման վտանգը:

Ջրամբարի վերանորոգումը կնպաստի տարածքի սողանքի դադարեցմանը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝ ձեռք բերել ծրագրի իրականցման անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

ԾՐԱԳԻՐ 2

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ. ԾԱԾԿԻ ՆՈՐԱՑՈՒՄ

Մշակույթի տունը ունի 35 տարվա պատմություն, որը շահագործման օրից մինչ այսօր չի վերանորոգվել, այդտեղ անհնար է որևէ միջոցառում կազմակերպել, համայնքը չունի աշխատանքից ազատ ժամերին հանգիստը կազմակերպելու և զբաղվելու վայր:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են՝

. Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը,
. Մշակույթի տան դահլիճը տրամադրել ավագանու նիստերի, համայնքի ընդհանուր ժողովների անցկացման համար:
. Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ:
. Տրամադրել խաղասենյակներ շախմատի , նարդու և այլ խաղերի համար:

Ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նյութատեխնիկական միջոցներ:

ԾՐԱԳԻՐ 3

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԼՈԿԱԼ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ. ԾԱԾԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ

Մանկապարտեզը շահագործման է հանձնվել 1978 թվից:
2011թ-ին կատարվել է մասնակի վերանորոգում՝ 1 խմբի համար:

Ծրագրի նպատակն ու խնդիրները.

Անհրաժեշտ է նորոգել ծածկը, որպեսզի չշարունակվի շենքի քայքայումը անձրևաջրից և որ լոկալ ջեռոցման շնորհիվ շարունակվեն պարապմունքները նաև ցուրտ եղանակներին:

Ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նյութատեխնիկական միջոցներ:

ԾՐԱԳԻՐ 4

ՈՌՈԳՄԱՆ ՄԱՅՐ ՋՐԱԳԾԻ ԹՄԲԱՅԻՆ ԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ոռոգման մայր ջրագիծը կառուցվել է 1979թ. և այժմ այն անմխիթար վիճակում է , անհրաժեշտ է վերանորոգել, որոշ տեղերում տեղադրել կիսախողովակներ:

Ծրագրի նպատակն է ապահովել համայնքի հողամասերի և սեփականաշնորհված հողերի ոռոգումը, բարձրացնել գյուղ նշանակության հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղմթերքների արտադրությունը:

ԾՐԱԳԻՐ 5

ԱՂԲԱՎԱՅՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ԱՂԲԱՀԱՆՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Այժմ աղբահանումը կատարվում է անհատական ձևով՝ մոտ 20%-ով:Անհրաժեշտ է կառուցել աղբավայրի ճանապարհը, այնուհետև կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ լուծել աղբատարի խնդիրը և աղբը հեռացնել համայնքից, որով կլուծվի սանիտարահիգիենիկ շատ խնդիրներ:

ԾՐԱԳԻՐ 6

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՀԻՄՆՈՎԻՆ ՆՈՐՈԳՈՒՄ

Գյուղապետարանի շենքը շահագործման է հանձնվել 1978թ. և մինչ օրս չի վերանորոգվել, չի գործում սանհանգույցը, չկա ջեռուցում, չի ապահովում աշխակիցների աշխատանքային պայմանները:Անհրաժեշտ է կատարել շենքի հիմնովին նորոգում, որը խթան կհանդիսանա աշխատակիցների արդյունավետ աշխատանքի համար:

ԾՐԱԳԻՐ 7

ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ՝ 1-ԻՆ Փ. 500Մ

Համայնքում չկա փողոցային լուսավորություն, 1-ԻՆ փողոցը՝ եղեգնաձոր – Գնիշիկ տանող ճանապարհն է, որին հարակից են գործող 2 առևտրի կետերը , ուստի առաջնահերթ անհրաժեշտություն է առաջանում հենց 1-ին փողոցի լուսավորության կառուցումը:

ԾՐԱԳԻՐ 8

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԴԻՄԱՑԻ ԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Համայնքը չունի բնակիչների բացօդյա հանգստի ,միջոցառումների անցկացման վայր.համայնքում չկա համայնքի անցյալը, ներկան արտացոլող որևէ սինվոլիկ արձան. ուստի անհրաժեշտություն է առաջանում համայնքապետարանի դիմացի այգու բարեկարգումը, հուշարձանի տեղադրումը: